ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՊԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Արարատ համայնքի պարարվեստի սիրելի՛ և հարգարժան ներկայացուցիչներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ այս գեղեցիկ տոնի՝ Պարի միջազգային օրվա կապակցությամբ:

Ամեն անգամ ներկա գտնվելով մեր համայնքում կազմակերպված տարբեր մշակութային միջոցառումներին և տեսնելով ձեր աշխատանքի նվիրումն ու արդյունքը, հասկանում ենք, որ դուք էլ ջանք ու եռանդ չեք խնայում ձեր աշխատանքի մեջ և մշտապես կանգնած եք մեր համայնքի, մեր մեծ ընտանիքի առաջընթացի թիկունքում: Ձեր ավանդն ու նվիրումն իրապես արժանի են բարձր գնահատանքի:

Կրկին շնորհավորելով բոլորիդ՝ քաջառողջություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ եմ մաղթում: Վստահ եմ, որ ձեր արվեստով շարունակելու եք բարձր պահել մեր երկրի ու մեր համայնքի պատիվն, ու ձեր շնորհիվ Հայաստան անունը ավելի ու ավելի հաճախ է հնչելու աշխարհի ամենատարբեր բեմահարթակներից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ